Հավելված N 2
ՀՀ կառավարության 2017 թ.
փետրվարի 2-ի նիստի N 4
արձանագրային որոշման

# ԾՐԱԳԻՐ

## ՊԱԼԻԱՏԻՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| Միջոցառման անվանումը | Պատասխա-նատու | Համակատարող | Կատար-ման ժամկետը | Ակնկալվող արդյունքը | Ակնկալվող ֆինանսա-կան միջոցները | Վերստուգելի չափանիշը |
|---|---|---|---|---|---|---|
| ***<u>Ռազմավարական ուղղություն 1.</u>***<br>**Հիվանդանոցային և արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում տրամադրող բժշկական հաստատություններում պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման մեխանիզմների ձևավորում և ներդրում** | | | | | | |
| ***<u>Միջոցառումներ</u>*** | | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **1)** հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկման իրականացնող կազմակերպություններում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունում, ««Սուրբ Աստվածածին» ծննդատուն» փակ բաժնետիրական ընկերությունում, Հայաստանի Հանրապետության | Հայաստանի Հանրապետության առողջապա-հության նախարա-րություն | Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) | 2017թ. | Հիվանդանոցային ծառայություններում մեծահասակներին և երեխաներին մատուցվող պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման հասանելիության և որակի բարձրացում | Հայաստանի Հանրապետ-ության պետական բյուջեով հատկացված միջոցների շրջանակում՝ առանց լրացուցիչ միջոցների ներգրավման, Հայաստանի Հանրապետության օրենսդրութ-յամբ չարգելվող այլ ֆինանսա-կան | Համապատասխան կազմակերպություններում մեծահասակների և երեխաների համար թվով առնվազն 10 մահճակալների ներդրում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| առողջապահության նախարարության «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում մեծահասակների և երեխաների համար մահճակալների ծավալում | | | | | աղբյուրներ | |
| **2)** հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում՝ «Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամում, Հայաստանի | Հայաստանի Հանրապետության առողջապա-հության նախարա-րություն | Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն | 2018-2019թթ. | Հիվանդանոցային ծառայություններում մեծահասակների և երեխաներին մատուցվող պալիատիվ բժշկական օգնության | Հայաստանի Հանրապետ-ության պետական բյուջեով հատկացված միջոցների շրջանակում՝ առանց լրացուցիչ | Համապատասխան կազմակերպություններում մեծահասակների և երեխաների համար առնվազն 10 լրացուցիչ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Հանրապետության առողջապահության նախարարության «Պրոֆեսոր Ռ.Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունում, մեծահասակների և երեխաների համար մահճակալների ծավալում | | | | հասանելիության և որակի բարձրացում | միջոցների ներգրավման, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող այլ ֆինանսական աղբյուրներ | մահճակալների ներդրում |
| **3)** Արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում՝ Հայաստանի Հանրապետության Արարատի, Արագածոտնի, Լոռու և Շիրակի | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն | Հայաստանի Հանրապետության Արարատի, Արագածոտնի, Լոռու, Շիրակի մարզպետարաններ | 2017թ. | Մարզերի արտահիվանդանոցային ծառայությունում բնակչությանը մատուցվող պալիատիվ բժշկական օգնության | Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով հատկացված միջոցների շրջանակում՝ առանց | Հայաստանի Հանրապետության Արարատի, Արագածոտնի, Լոռու և Շիրակի մարզերի արտահիվանդ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| մարզերում շարժական թիմերի ձևավորում | | | | հասանելիության, արագ արձագանքման ապահովում, որակի բարելավում | լրացուցիչ միջոցների ներգրավման, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող այլ ֆինանսական աղբյուրներ | անոցային բժշկական կազմակերպություններում առնվազն 15 շարժական թիմերի ձևավորում և գործարկում |
| **4)** Արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում՝ քաղաք Երևանում և Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Սյունիքի, Վայոց ձորի, | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն | Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ), Հայաստանի Հանրապետության Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Սյունիքի, Վայոց ձորի, | 2018-2019թթ. | Երևան քաղաքի և մարզերի արտահիվանդանոցային ծառայությունում բնակչությանը մատուցվող պալիատիվ բժշկական | Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով հատկացված միջոցների շրջանակում՝ առանց | Երևանում և Արմավիրի, Գեղարքունիք, Կոտայքի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզերում արտահիվանդ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Տավուշի մարզերում շարժական թիմերի ձևավորում: | | Տավուշի մարզպետարաններ | | օգնության հասանելիության, արագ արձագանքման ապահովում, որակի բարելավում | լրացուցիչ միջոցների ներգրավման, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող այլ ֆինանսական աղբյուրներ | անոցային բժշկական կազմակերպություններում առնվազն 15 շարժական թիմերի ձևավորում և գործարկում |
| ***<u>Ռազմավարական ուղղություն 2.</u>***<br>Պալիատիվ բժշկական օգնություն և սպասարկում պահանջող և առավել կարևոր սոցիալական նշանակություն ունեցող հիվանդությունների հակազդման կամ կառավարմանը ուղղված ռազմավարություններում պալիատիվ բաղադրիչի ներառում | | | | | | |
| ***<u>Միջոցառումներ</u>*** | | | | | | |
| 1)«Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 24-ի թիվ 11 արձանագրային | Հայաստանի Հանրապետության առողջապահության | | 2017 թ | Տուբերկուլյոզով հիվանդ պացիենտներին և նրանց ընտանիքի անդամների | Ֆինանսավորում չի պահանջում | Տուբերկուլյոզով հիվանդ պացիենտներին և նրանց ընտանիքի |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագծի ներկայացում | նախարա-րություն | | | պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման հասանելիությունն ապահում | | անդամների պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման տրամադրված ծառայություններ առկայություն |

***Ռազմավարական ուղղություն 3.***

Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղերի շրջանառության ոլորտը, պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման ոլորտը կարգավորող օրենսդրության կատարելագործում, ներառյալ գործող օրենսդրության վերլուծություն, խնդիրների և հակասությունների վերհանում, նոր իրավական ակտերի ընդունում,

*Միջոցառումներ*

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1) Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղերի շրջանառության ոլորտը, | Հայաստանի Հանրապետությա ն առողջապահությ ան | | 2017 թ. | Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղերի | Ֆինանսավ որում չի պահանջում | Թմրամիջոց ների և հոգեմետ (հոգեներգո րծուն) |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման ոլորտը կարգավորող օրենսդրության վերլուծություն, խնդիրների և հակասությունների վերհանում | նախարարություն | | | շրջանառության ոլորտը, պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման ոլորտը կարգավորող արդյունավետ օրենսդրության մշակման հիմքերի ստեղծում | | նյութեր պարունակող դեղերի շրջանառության ոլորտը, պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման ոլորտը կարգավորող օրենսդրության վերլուծություն, խնդիրների և հակասությունները |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ամփոփող տեղեկանքի առկայությու ն |
| «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում և դրա հիման վրա ընդունված իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ նախագծերի ներկայացում | Հայաստանի Հանրապետությա ն առողջապահությ ան նախարարություն | | 2018-2019 թթ. | Օրենսդրության կատարելագործման միջոցով պացիենտներին տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման, ներառյալ դեղորայքային ապահովման բարելավում | Ֆինանսավ որում չի պահանջում | 2018թ.«Թմր ամիջոցների և հոգեմետ (հոգեներգործ ուն) նյութերի մասին» Հայաստանի Հանրապետո ւթյան օրենքում փոփոխությու ններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում ՀՀ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | կառավարություն 2019թվականի«Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 18-ի թիվ 270-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարություն |
| ***<u>Ռազմավարական ուղղություն 4</u>*.** **Պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման ոլորտում գործելակարգերի ապացուցողական բժշկության հիման վրա ստեղծված կլինիկական ուղեցույցների մշակում,** | | | | | | |
| ***<u>Միջոցառումներ</u>*** | | | | | | |
| 1) Պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման գործելակարգի և ապացուցողական բժշկության հիման վրա ստեղծված կլինիկական ուղեցույցերի մշակում և | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն | | 2017-2019 թթ. | Պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման որակի ապահովմանը ուղղված երաշխիքների ապահովում | Ֆինանսավորում չի պահանջում | Օրենսդրությամբ սահմանված կարգի համաձայն ընդունված պալիատիվ բժշկական |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| ընդունում | | | | | | օգնության և սպասարկման առնվազն 3 գործելակարգ և 3 կլինիկական ուղեցույց |
| ***Ռազմավարական ուղղություն 5.*** **Պալիատիվ բժշկական օգնություն իրականացնող անձնակազմի ուսուցանման նպատակով բարձրագույն և հետբուհական մասնագիտական, ինչպես նաև նաև լրացուցիչ կրթական ծրագրերում պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման բաղադրիչի ներառում** | | | | | | |
| ***Միջոցառումներ*** | | | | | | |
| 1)Պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման վերաբերյալ հետբուհական և լրացուցիչ կրթական օրինակելի ծրագրերի մշակում և հաստատում բժիշկների, | Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի | 2017-2019 թթ. | Պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման ոլորտում համապատասխան հմտություններով և | Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող այլ | Պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման վերաբերյալ հետբուհական և/կամ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| միջին բուժանձնակազմի, սոցիալական աշխատողների համար | | Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | | գիտելիքներով զինված կադրերով հագեցվածության ապահովում | ֆինանսական աղբյուրներ: | լրացուցիչ կրթական առնվազն 3 ծրագրերի մշակում |
| ***<u>Ռազմավարական ուղղություն 6.</u>***<br>**Պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման պատշաճ կազմակերպման համար անհրաժեշտ տեղեկատվության շարունակական հավաքագրման հիմքերի ստեղծում** | | | | | | |
| ***<u>Միջոցառումներ</u>*** | | | | | | |
| 1) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանով պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման համար անհրաժեշտ բժշկական | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն | Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն (համաձայնությամբ) | 2017-2018 թթ. | Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում պալիատիվ բժշկական օգնության մշտադիտարկման համար անհրաժեշտ | Ֆինանսավորում չի պահանջում | Պալիատիվ բժշկական օգնության համար անհրաժեշտ առնվազն մեկական հաշվառման, |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| ձևաթղթերի ձևերը սահմանող իրավական ակտերի ընդունում ՀՀ առողջապահության նախարարի հրամանով | | | | ընդունված ձևաչափերի առկայություն | | հաշվետվական ձևերի առկայություն |